

ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ԵՐԱՆԵԼՎՈՅՆ ՑՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐՅԱՆԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍՍՅԵՍՅ ՄԱՐԴԱՐԵՒՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱԾ, ԼԱՏԻՆԵՐԵՆ



ԱՐԻՌՅԱ մէջ աշխարհանանդէս տօնախմբութեամբ նույակալ բարեբախտ պարագայի մ'առթիւ տեղի ունեցաւ սոյն հրատարակութիւնս։ Հոռվիմայ քահանայապետաց դասակարգին մէջ, զուգահաւասար ընդ գերանամբաւան՝ առաքելապետական աթուոյն վրայ ներկայապէս բազմող Սրբազն Հօրն հաւատացելոց Լեհիննի ԵՐԵՔՏԾԱՍԱՆԵՐՈՌԻ յիսնամեայ քահանայութեան յոբելսանն, որ զբիստոննեայ աշխարհ համօրէն հրաւիրեց յարգանաց եւ սիրոյ նուրատուութեամբք՝ չերմն հաւատոց եւ անքակտեի քրիստոսական սիրոյ եւ միութեան յաշեանակն ցուցանելու առ Սրբազն Աթոռն Արաքելապետին՝ յամենայն դասակարգէ հաւատացելոց, չեր կարող չքորրոքի մեր սրտից եւ զգացմանց եռանդն՝ ըստ մերում կարի ցուցանելու իբրեւ որդիք առ Ս. Հայրն հասարակաց՝ մեր սիրոյն եւ երախտագիտութեան մետ նաև նոր աւիթ մը՝ առաւելեւս արծարծելու իւր սէրը առ այն ազգն՝ առ որ մինչեւ ցարդ իւր յատուկ սիրոյն մեծամեծ նշաններ տուեր է։ Այո, Լեհին ԵՐԵՔՏԾԱՍԱՆԵՐՈՌԻ, իբրեւ նոր ոմն Բենեդիկտոս յ.թ, գթալիք աչքով եւ յատուկ սիրով գգուեց եւ կը գգուէ զորդիս արեւելիսան եկեղեցւոյ անդրամիկ դստերն Հաւատոց՝ Աքբարեան եւ Տրդատեան եւ Լուսաւորչեան սերընդոց։ եւ այսօր նոյն մեծախորհուրդ քահանայապետին շնորհիւ հայ ազգութիւնն ունի իրեն փառաշնչն սեփական վարժարանն յԱկնն Տիեզերաց, հրաշալիք նոխունեամբ զարդարուած ընդ արձակ եկեղեցեան եւ վանատեղեաւ, որ կը կրէ զաւերժական անունն Լեւոնեան-Հայկական վարժարան, ուր ինչպէս երբեմն առ նախնեօք յԱղեքսանդրիա, յԱթէնս եւ 'ի թիւ զանդիոն, այսպէս եւ առ մեօք կը դիմն

հայկազուն սերընդոց ընտիր զաւակունք՝ կրօնից եւ գիտութեան գանձիւք քեղնա, ւորելու զանձինս եւ զիայրենիս միանգամայն:

Այսպիսի արեւելսանէր եւ մանաւանդ հայասէր քահանապավետին յորեւեանն, ըստ մեզ, առաւել պատշաճագոյն եղանակաւ չէ կարող տօնել նայ ազգութիւնն, եթէ ոչ առաջի դնելով նմա թէ ոչ անարժան է մեր ազգն իւր սիրոյն եւ ոչ ապերալիս՝ փոխարինելով նմա որդիքական սիրոյ հաւաստիս. Այս նպատակաւ հրատարակուած է նաեւ մեր այս տպագրութիւնն, որով անգամ մալ աւելի ցոյց տուած լինիմք գիտ նականն եւրոպից առջև թէ նաեւ ուսումնական ասպարիզի մէջ ոչ փոքր արդիւնք ունի նայ ազգին անցեալն, որ բարբարոս դարերու համայնածախ աւերմունքներէն կորդերով զանգին մատենագրութիւնն Փիլիպն Եքրայեցւոյ, Եւստրեայ Կեսարացւոյ, Սեբարիանու, Ռ. Եփրեմի, Արիստիտեայ, մերթ ընդ մերթ ընծայած է ՚ի լոյս, լեցնելով կրօնական-պատմական կարեւոր դատուրկամիջոցները յընդհանուր մատենագրութեան ազգաց: — Այս դասակարգին կը վերաբերի նաեւ առաջիկայ հրատարակութիւնս Մէկ նութեանն Եսայեայ մարգարէութեան ՚ի Ս. Ցովիկաննէ Ուսկերերանէ, որոյ նայ ընագիրն քանի մի ամեօք առաջ հրատարակելով առանձին մատենիւ (յամին 1880), այժմ զնոյնն ՚ի լատիներէն փոխադրելով՝ կը շնորհիմք ՚ի Վայելս գիտնականն Եւրոպից: — Հայ ընագրոյն հրատարակութեան ժամանակէն մինչեւ ցայսօր չըստացանք նորագոյն ինչ գիտեիք այս արժանաւոր գործոյն վրայ, ուստի եւ աստ ՚ի մէջ կը բերեմք աշխարհաբար լեզուաւ նոյն հրատարակութեան յառաջաբանին մէջ տրուած տեղեկութիւնքն, որք բաղմաց անծանօթ լինելով մեք ծանօթացընել Կ'ուզենք մեր ընթերցողաց, որոց գիտեմք քանի՞ սիրելի է իւրեանց եւ մեր սրբազն եւ սիրելի նախնի Հարց վաստակոց ներբողեանը լսել:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՅՈՒԱԶԱԲՈՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Հաստ ժամանակէ ի վեր կը փափաքէնք հրատարակել Արբոյն Յովիչանու Ոսկերերանի այս կարեւոր մասն ալ, ի նախնեաց թարգմաննեալ, բայց այլ և այլ պատճառաւ մեր այս փափաքն մինչեւ ցայցմէջիրագործեցաւ: Եւ դիսաւոր պատճառն, ինչպէս Մեկնութեան թղթոցն Պաւլոսի յառաջարանին մէջ ակնարկած ենք, այս Մեկնութեան կանաչ հին ձեռագրին վիճակն եղաւ: որ մի միայն էր և այն լի սիրաներով և շատ տեղ պակասաւոր: Լած լինելով կան-խաւ թէ ազգայիններէն մէկունքով այս մատենիս վերաբերեալ հասուածներ կը գտնուին, որ պակաս էին ի մերն, կը յուսացինք օրինակ մը ձեռք բերել, մեր ձեռագրին վրիպակները ուղղել և պա-

րապ տեղերը լեցընելու համար: բայց մինչև ցարդ մեր յայսն ի գուր ենելով, որոշեցինք այլ ևս անյայտ չպահել ու առավելաց ասպիրաց տոջեւ եկեղեցւոյ սուրբ հարց մատենագրութեան այս գանձը: Պատշաճութիւնն կը պարտաւորէ լրդ: մեզ քանի մի տեղեկութիւն գնել հոսնկատմամբ մեր ձեռագրին և ներկայ տպագրութեանս, որ եւ կընայ ուսումնասիրաց օգտակար լինել: Մէր ունեցած միակ օրինակին՝ անթուական է, առանց յիշատակարանաց գրչագրաց (բաց ի միոյ, որց վրայ յետոյ պիսի խօսիմք): պակասաւոր թէ սկիզբը, թէ մէջը և թէ վերջը. ընթերցողն այս պակասաւոր տեղերը նշանակեալ պիտի գտնէ ապագրին մէջ իւրաքանչիւրը իւր տե-

զը: Դրութեան եղանակն և բամբակեայ թուղթն համարել կուտան մեղ թէ ժբ դարս գրութիւն է: Աւզպագրութեան սխալներէն զատ, շատ տեղ առղերու խառնակութիւն կայ, իմաստներն առանց կապակցութեան բաժանեալ իրարմէ, և այլն. այս պակասութիւններն յայտնապէս ընդօրինակազինն են և ոչ թարդմանին: Չուզելով ձեռագրին ուրիշ փոքրիկ զիտելի հէտերը նշանել, պիտի խօսի: ք արդ նորա օդտակար և շահաւետ մասին վրայ, որ է հոյկական թարգմանութիւնն:

Եւրոպից բանասէրը մինչև ցայսօր այս գործոյ եօմն տռաջին զլուխները միայն ունէին և ութերորդէն ալ մինչև 4 հտմար: Հոչակաւորն Մոնֆորոն իւր և Մատենագրութիւն Սըրոյն Յովիչաննու Ռոկեբերանի և հաւաքածոյին մէջ այս զլուխներուն յրենական ձեռագիրը մեր առջև կը դնէ: Հանդերձ լատին թարգմանութեամբ, յաւելլավ քանի մի տեղեկութիւն այս Մեկնութեան հարացատութեան վրայ:

Այսիմետեան բանասիրաց մէջ Ռոկեբերանի այս մատենագրութեան վրայ երեք գլխաւոր խնդիրը կային, այսինքն.

Ա. Արդեօք սուրբ Հայրս այս մեկնութիւնն, որոյ քանի մի գլուխներն միայն կային ցայսօր, լրացնց եթէ ոչ:

Բ. Արդեօք բեմախօսուելու համար յօրինեց, ինչպէս իւրուրիշ մեկնութիւնները, թէ առանձին իւրա անձին վարժութեան կամ կիրառութեան համար:

Գ. Արդեօք յինափնք թէ ի կոս տանդնուպօխս զրեց:

Առաջին խնդիրն՝ առ որ բանադէտք բացասական առաւել պատասխան կուտային, արդ հայկական նախնի մատենագրութիւնն բովանդակաբաէս կը լուծէ, որոյ պահեալ էր ոչ ենթադրութեամբ և կարծեզր միայն հաւատուել, այլ անժխտելի իրաւամբք վլայ լինել եկեղեցւոյ սուրբ Վարդապետին՝ այս զործոյ բովանդակութեան մասին:

Դիւրին չէ որոշել թէ արդեօք Սուրբ Վարդապետ այս մեկնութիւնը ժողովրդեան առջև խօսած է՝ թէ իւր յատուկ:

Կիրառութեան համար յօրինած այս, շատ տեղ կ'երեկի թէ իւր խօսքը առ ունկնդիրս կ'ուղղէ սուրբ Վարդապետն (զր օրինակ, երես 29 տող 44. 34, 20-26. 60, 13-25. 85, 27-30. 127, 32. 131, 23. 139, 32. 140, 1-6. 369, 13 և այլն). այսու հանդերձ Մոնֆորոն կ'ըսէ թէ զժուարին է ինձ ընդունել թէ այժմեան ձեռքերնիս ունեցածնութ բարովին նմանն ժողովրդեան խօսած լինի: Զայս կ'ըսէր հոչակաւոր բենեդիկտ առանց վերցիշեալ միայն եօմն և կէս զլուխներն ունենալով, որչափ աւելի մեծ հաւասարիք պիտի ունենար իւր կարծեաց վրայ հաստատուն մնալու, եթէ ծանօթ լինէրնա իսայեայ մեկնութեան մեր այս շարունակութեան, որ դրեթէ ամբողջ է և ինսախնեաց թարգմանեալ (հաւանականաբար և դարուն): Եւ յիշաւի այս հայկական թարգմանութեան մէջ ալ գրեթէ ամէն երես մանր բաղդատութեանց կը հանդիպինք եսայեայ այլ բնագրաց ու այլ և այլ թարգմանչաց մեկնութեանց, և այլն, որը յայտնի կ'ընեն, ինչպէս կ'ըսէ Միներ, որ սուրբ Հայրն աւելի մեկնիչ քան թէ ճարատարախօս կ'ուզէ լինել, կամ ըստ խօսից Տիւրենի և Հմուտ ոմն պատմական - տասուածաբանական քան բուրյագէտ և թէպէտ և այս վերջին մասն ալ ըստ բաւականի ընդարձակ տեղի բռնած է աստ և անդ բովանդակ զործոյն մէջ: — Նոյնպէս և բովանդակ մեկնութեան մէջ ամեննին յաւացարան չկայ, զրո սովորաբար ամէն ճառերուն մէջ կ'ընէր Ռոկեբերան, նա որ ճարատարախօս էր և հաետորական կանոնաց հմուտ. վերջը յորդուրական խօսք ամեննին չունի և ոչ փառատրութիւն Քրիստոնի կամ Սուրբ Երրորդութեան, որ իւր ընդհանուր սովորութիւնն է ժողովրդեան առջև խօսած ամէն ճառերուն մէջ:

Այսպատճառաւներէս կ'երեկի թէ պէտք է հետեցընել թէ սուրբ Հայրն այս մեկնութիւնս յօրինեց է իւր անձնական կիրառութեան համար:

Ուզելով արդ քննել երրորդ խնդիր-

թը, այսինքն թէ ուր զրեց սուրբ Հայրն այս մեկնութիւնս, թերեւս վեր՝ ի վերց նկատելով՝ հոյ թարգմանութեան ամբողջութիւնն կարծել տայ թէ՝ ի կոկիւսոն Հայոց լրացուցած լինի նախնաբար սկսած գործը, երբ աբասուեցաւ տմապարիշտ կայսրուհայն ձեռօքը: Բայց եթէ լաւ մտածէ մէկն Սրբոյն աքսորանց միջոց անցուցած կենաց վրայ, որ ի եղաւ տառապանոր, զոր և նուիրեցնաանդազարսուրբ հաւատոց քարոզութեան տեղուցն և շրջակայից անհաւատից, ակարիլինելով մարմնով և խիստ ձմեռուան մեծագոյն մտոը հիւանդ, և թէպէտ թեմին հոյ եպիսկոպոսն Գիոսկորոս սիրտալիր ընդունելու թիւն ըրաւ, ոյլ այսու հանդերձ կարեօր միջներէն զուրկ, այս բաներս մտածելով՝ կարծեմ թէ ոչ ոք կը համարձակի ըսել թէ սուրբ Հայրն այսպիսի երկասիրութիւն մի, որ կը պահանջէ հանդարտութիւն մոտաց և երկար և անխոնջաշխատանք՝ տառապոնոր լի կենաց միջոց յօրինած լինի: Աւստի յԱնտիոք թէ՝ ի կոստանդնուպօլիս զրեց այս գիրքը, Հասարակաց կարծիք է՝ ի մէջ բանափրաց թէ յՈնտափ զրած է. զայս կը ընդունի նուե թիլլըմն, որ և կը սէ. « Աչ ոք կը տարակուափ այս մեկնութեանս Ռոկերերանի լինելուն վրայ, որ ազգիւր է յորդառատ վցցելաբանութեան: Հռովմէտկան պետութեան վրայ զրածները յէջ 9, խիստ լու կը յարմարին Ռոկերերանի ժամանակին նախքան զամն 377 (Սրբոյն սարկաւագութենէն 4 տարի առաջ): կարծեմ թէ այս գիրքս յօրինած է կամ յառանձութեան կամ սարկաւագութեան մի ջոց. վասն զի անհնարին կ'երեկ' որ քահանայութենէն ետքը այնչափ պարապմիջոց գտած լինի, այսպիսի գործի մը ձեռք զարնելու համար »: Այս խօսից վրայ կը յաւելու Մոնֆորոն. « Թիլլըմնի այս կարծիքը յօժարակամ կ'ընդունիմ: և սուոզիւ կարելի է բսել թէ այս ճառերս յօրինած է նա՝ ի վարժութիւն քարոզութեան, մինչդեռ քարոզատութեան պաշտօնը չէր ընդունած:

(յիտքահանացութեան աստիճան ընկունելուն, որ եղաւ 383 տարւոյն մէջ): Միանգամայն կրնանկ հուաստել թէ յԱնափիք գրութ լինի այնու զի բազմաթիւ տեղեր Հրէց գէմ կը խօսի. և նոյն ժամանակ յՈնտիոք ՚ի մէջ քրիստոնէց և Հրէց վէճ և հակառակութիւնք կային, զոր գիտենք ոչ միայն իւրութ ճառերէն, գրեալ ընդգէմ ծիսից և մնուի աւանդութեանց Հրէց, այլ նաև յՈնտիոք խօսած ուրիշ ամէն ճաւաերէն: Եւ գրձեալ թուլով նաև այս պատճառներս, անհնարին կ'երեի որ Ռոկերերան այս մեկնութիւնս յօրինելու այնչափ ժամանակ գտած լինի իւրպատիրագրութեան ատեն:

Արդ հարկէ քանի մի խօսք ալ ըսել ցացընելու համար թէ եսայի այ Մեկնութեան շարունակութեան մեր այս ներկայ հրտակակութիւնս՝ Ս. Ասկերերանի գրութիւնն է և ոչ ուրիշի:

Առ այս մեր օրինակն տպացոյց մի կ'ընծայէ մեղ. որ յինշանակեր ուր յոյն բնադիրն կը վերջանոյց բան մը՝ ցուցընելու թէ շարունակութիւնն Ասկերերանի չէ. մանաւանդ նշանելով թէ յոյն բնագիրն հոնկը գագարի, օրինակոյն՝ Մեկնութեան շարունակութիւնը կ'ընէ, յայտնապէս եսայի այ Լ զինոյն խորազրին մէջ գնիելով և երանելոյն ծեառն Յովիչաննու Ռոկերերանի ՚ի մարդարէն եսացիառ :

Երկրորդ ապացոյց կրնանք ընդունել զայս, զի այս շարունակութեան մէջ չկայ Ս. Ասկերերանի գրութեան ուսոյն կամ աստուածաբանական և բարոյական սկզբանցն և կամ ժամանակին սովորութեանց հակառակ իր մը, մանաւանդ շատ անդամ սուրբ Վարդապետին յատուկ են այն հաստուածքն, յորս հասարակորէն խօսք կը լինի ապօթից, կամ ողբամածութեան, կամ եկեղեցւոյ, կամ մեծատանց պարտուց առ ազգաւարս, հեթանոսաց կրօնից գարշութեան, արքեցութեան, զեղիսութեան, կախարգաց և զիթից խարէութեան վրայ. և Ս. Ասկերերան՝ որ սովորութիւն ունի իւր այլ գրուածոց մէջ ընդգարձակօրէն

ճառելու այս նիւթոց վրայ, նոյնպէս կը խօսի և այս մեկնութեանն մէջ. մասնաւանդ թէ բաղմաթիւ հատուածներ կան՝ որք բառ տու բառ համապատասխան են իւր Գաւլոսի թղթոց և Մատթէի մեկնութեան մէջ բածներուն: իւր աստուածաբանական ապացուցութիւնքն ալ ընդգէմ վաղենտիննեանց, Մարկիոննեանց, Անոմեանց և ընդհանուր ընդգէմ Արիոսեանց զրիթէնոյն են իւր ուրիշ մատենագրութեանց մէջ ըրածներուն: Եւ առ այս համոզուելու համար՝ բաւական է միայն քանի մի հատուածներ մեկնութեանն ընդգէմ Անոմեանց՝ բաղդատել իւր ժի ճառացի հետ, զորս յատկապէս իրենց գէմ դրից¹: Բաց ասաի՛ ինչպէս առաջին մասին մէջ շատ անգամ ընդգէմ չըթից կը ճառէ Ս. Հայրն, այսպէս նաև հայերէն շարունակութեան մէջ ամեններին տուիթ ջի Կորոնցըներ ընդգէմ չըթից եղ բակացութիւններ կազմելու և իրենց չարութիւնը յանդիմաններու: Ասո կը նշանակինք զսակաւ հատուածս՝ իբրազմաց, որ հետեւալ երեսներուն մէջ կը գտնուին 202, 296, 326, 378, 383, 385, 395-397, 413, 432, 440, 473, և այլն, և այլն: Հըթից գէմ այս վիճաբանութեան պատճառը արգէն վերը յիշեցինք:

Եւ որորինեակ Ս. Հայրն մեկնութիւնս յԱնտիոք զրեր է, Լուկիանոս մարտիրոսի՝ իւր Հայրենակցին՝ Ս. Գրոց ըրածնոր թարգմանութիւնը կը պաշտպանէ (երես 132, 134), ըսելով թէ ազատ է ամենայն մոլորութենէ և յանիրաւի թարհամարի հետու լու այս պաշտպանութիւնս աւելի ևս կ'ապահովէ զմեզ ընդունելու ոչ միայն թէ այս կիրքս մսկերերունի է, այլ նաև թէ յԱնտիոք զրուած է, ուր Լուկիանոս մարտիրոսին թարգմանութեան հարազատութիւնն ինդրոց նիւթ էր ժողովրդեան մէջ:

Գարձեալ զիտենք որ Ս. Սկիերերան իւր Ս. Գրոց ամենայն մեկնութեանց մէջ միջին շաղին կը հետեւի ի՞մ մէջ կրկու-

¹ Որոց եօթն միայն Նախնիք մեր թարգմաներ են. թերեւս յԱնտիոք խօսածներն են:

հակառակամարա գ-պրոցաց, որք էին Աղքասանգրից և Անտիոքայ. որոց առաջինն ասառաւածայիններշնչութիւն կ'ընդունէր ոչ միայն Ս. Գրոց իմաստից՝ այլ և ամէն մէկ բառից նկատմամբ, մինչ զեռ. Ս. Ասկերերան կ'աւտուցանէ թէ Ս. Գրոց մէջ առանձին բառերն ներշընչեալ չեն, այլ միայն աստուածաբնի իմաստներն: Բայց և ոչ անտիգրեան գ-պրոցին կը հասեի ամենայն մասամբ, ոչ մերժելով բարորդին Ս. Գրոց այլաբանական իմաստներն, այլ պատուիրելով որ զգուշանան զայնս յաճախելէ և ընդլայնելէ, որովհետեւ այսիմասպն կարեւոր չի համորթիր. Թ. Գըրոց մեկնութեան համար: Քյափէն շատ աեղ ինայեայ մեկնութեան մէջ կը խօսի այս նկատմամբ, ինչպէս երբ կ'ըսէ Ա. Ի. Կ. պէս մտացն կարդի միտ զնեմք, և ոչ բանիցն ասացելոց. — Յօրթամ Գիրեր այլ ասացիկ բարբառովք զիրս ինչ նշանակիցն, մի միայն ևեթ հաստատել կալ, այլ զմտացն զէտ վարել, և ոչ յայլասացիկ բարբառն հաստատել. — Վայր բապտր է ցանկութիւն այնոցիկ, որ զայլասացիկն հաստատել կամին, զի մոլորեալ իմն այնու այրը անդը հարկանիցին: այսպիսի իմաստիք խօսքեր կը գանուին 64, 68, 121 և այլն, եւ րեսները: Եւ թէպէտ այս խօսքերս կ'ըսէ մսկերերան, բայց յետոյ յայնի կը ցուցընէ թէ չուպեր բոլորովին Սաւըր Գըրոց մեկնութենէն այլաբանական իմաստները վերցընել. վասն զի յէջ 482 յետ եսայեայ կի գլխային սկզբնաւորութիւնը մեկներու, նոյն բնաբաննը կը կըրկնէ՝ այլաբանական իմաստիւթ մեկնելով, թէ և Միտ գիցուք և այլասացիկ բանիցն և Աստի կ'երեսի մեղթէնաւիւրու առաջն ունելով Արուգինի վեցինանը, շատ աեղ կը բաղդատէ ի միասին թէստ գոտինի, Սիմառոսի և Եօթամասնից թարգմանութիւնները. վասն զի ըստ վկայութեան իւսիւքոսի երռաւաղեմաց այն (իւր Յօրթ զրոց մեկնութեան մէջ) սուրբ գրոց մեկնը ըշաց մէջ և թէստ գոտասու և Սիմառոս հերբայական բանին ծառայեցին, իսկ Եօթամասնիքն մուտք

աստուածային գրաց ծառայեցին և ոչ
բանի :

Ալրդ ոչ միայն այս գիտողութիւննե-
րով և այլ ևս ուրիշ ապացոյցներով կը ը-
նակի հաւասարել իսայեայ մեկնութեան
հայերէն շարունակութեան հարազա-
տութիւնը, սցը առ այս շեն պակսիր
մեր նախնեաց անսուտ վլայութիւնըն :
Այսպէս Դաւիթ վարդապետ՝ ի ժբ դա-
րու, իւր վարդապետին Պետրոսի յոր-
դորմամբ Սուրբ Հարց գրուածոց ծաղ-
կաքաղ ընելով իսայեայ մեկնութիւնը
դրեց, և շատ տեղ Ս. Եփրեմի և Ս.
Կիւրդի Աղեքսանդրացւոյ և ուրիշ Հարց
հատուածներուն հետ, կը դնէ նաև
ամբողջական բառ. առ բառ հատուած-
ներ իսայեայ այս մեկնութենէս՝ Ասկե-
բերանի անուամբ: Նոյնպէս նաև հոչա-
կաւոր վարդապետն Գէորգ Սկեռառ-
ցի ժբ գարուն վերջերը, իսայեայ մե-
կնութեանը մէջ, զոր Հայոց միայնա-
կեաց թագաւորին Հեթմայ ժամանակ
գրեց (1289—1305) բազմաթիւ տե-
ղեր հատուածներ կը յիշտատակէ այս
մեկնութենէս Ասկեբերանի անուամբ:

Բաց ՚ի այս երկու վերսպիշեալ ան-
ձանց, ուրիշ ծանօթ վարդապետ մ՞ալ
Գրիգոր Տաթէնացի, չորեքտաստներորդ
գարուն վերջերը, իսայեայ մարգարէու-
թեան մեկնութիւն մը դրեց, հաւաքե-
լով իւր վարդապետին Յովհաննու
Որոսնեցւոյ՝ կախիկ մականուաննելցին
հատուածները, յորում գրեթէ մեր
ոյս իսայեայ մեկնութեան շտովին կը
հետեի թէ առաջն և թէ երկրորդ-
մասին մէջ, այլ առանց յիշտատակերը
Ս. Ասկեբերանի՝ անունը: — Դարձեալ
ուրիշ վլայութիւն մ՞ալ են այն հա-
տուածներն՝ զրու այս մեկնութենէս քա-
ղեալ՝ յանուն Ասկեբերանի՝ մեր ձառ-
ընարաց մէջ կը գտնենք, որոց տարրե-
րութիւնքը ապագրութեանս վերը դը-
րինք, բովանդակեալնիւթոց և անուանց
ցուցակաց հետ:

Իր համարիք թէ վերցգրեալ տեսու-
թիւնք և վկայութիւնք կը գորեն փորբ
՚ի շատէ համոզելու զմեզ թէ իսայեայ
մեկնութեան այս շարունակութիւնն

յիբաւի Ս. Յովհան Ասկեբերանի լինի:
Եւ արդարեւ իսկ, եթէ մէկն ստուգիր
ընդունի թէ առաջին մասն՝ որոյ յոյն
ընազիրն կայ՝ Ասկեբերանի է, և ծա-
նօթութիւն ունենայ մեր գրաբարին,
չի կրնար բնաւ երկրայիլ թէ առաջին
մասին հայկական թարգմանչին
կատարելապէս կը համաձայնի լեզուին
սճով երկրորդ մասին հետ, որ իւր շա-
րունակութիւնն է: Արբայն Ասկեբերանի
մատենագրութեանց հայ թարգմանչին
ոճն, որ է գարուն կը վերաբերի և հայ-
կական մատենագրութեան սակեցարն
կը կազմէ, այնպիսի բնադրոշն կը կրէ
որ անհնարին է այլոց հետ շփոթել-
այնպէս որ եթէ ուրիշ ապացոյց մ՞ալ
չունենայինք, միայն հայկական թարգ-
մանութեան առաջին մասին երկրորդին
հետ բազգաւառութիւնն, ինչպէս և Ասկե-
բերանի ուրիշ գրութեանց հետ, բաւ-
կան պիտի լինէր հատաստելու մեղ թէ
բովանդակին մի և նոյն հայկաբան ճար-
տար և հմտւա գրչի գործ է:

Եթէ կը դանուի կտրեւոր տարրերու-
թիւն մը ՚ի մէջ առաջին մասին և այս
շարունակութեանս՝ այս միայն է, որ
առուժեցն մէջ երբեք չեմք հանդիպիր
Ակիւլասայ, Սիմաքսոսի և Թէկովստիովսի
թարգմանութեանց բազգաւառութեանց,
մինչդեռ երկրորդին մէջ ամենառատա-
նն: — Խմկարծիքս է այս նկատմամբ
որ Ս. Ասկեբերան իւր մեկնութեան եր-
կու մասսանիքն այլ և այլ ժամանակ գրած
է, թէպէտ երկաւքն ալ յԱնտիոք՝ կոս-
տանդնուազօսի պատրիարքականն գաւ
հուն վրայ բարձրանալցն առաջ. և թեր-
ես ժամանակին զանազանութիւնն եր-
կու մասսանց մէջ այս յիշեալ տարրերու-
թեանս առիթ տուած լինի: Դարձեալ
թէպէտ տառաջին մասին մէջ Ակիւլասայ,
Սիմաքսոսի և Թէկովստիովսի անուանց
չեմք հանդիպիր, բայց կայ երբայական
և ասորի բնագրին հետ բազգաւառութիւն
մը (տես երես 412). Երբայսկան բնա-
գիրն կը յիշուի գարձեալ հայկական
շարունակութեան մէջ շատ անդամ, իսկ
ասորին աստ մի անդամ միայն. այլ թե-
րեւ Ա. Վարդապետն՝ ի մէջ բերած բնա-

գլուզ թուզին մէջ լրելեայն իմացընել կ'ուզէ զոյն երբ կ'ըսէ տոէպ այլ անելիք առևի կամ պարզաբար՝ իսկ այլք առևի կամ ուշին այսպէս, և այլն:

Կայ նաև ուրիշ կարեսը կէտ մ'ալ այս մեխնութեան հայերէն շարունակութեան մէջ, որ է օրինակողին մի միայն ծանօթութիւնն հայերէն ձեռապրին մէջ, ուր կը լմնոյ յոյն բնագիրն եռայեայ ամբողջ եօթն զիսոց և տթերորդէն մինչեւ և համար. և այսպէս կը գրէ « Մինչև ցայ վայր գտա իր բովիք ձեռքք գրեալ՝ երանելոյն Յովհաննու յունարէն » . և յետ այս ծանօթութեան՝ օրինակողն նոր երես մը կը սկսի և և համարդոյն մեխնութիւնը կը շարունակէ, առանց փոխելու ոչ զգիր, ոչ զթուզիթ և ոչ զթանար:

Այս ծանօթութենէս հետագայ հետևութիւնները կը քաղեմք. Ա. Թէ՛ ուրեմն մեր նախնեաց ժամանակն ալ Բուկերեանի մեխնութեան յունարէն բովանդակ զիրքը կրսուած էր, և յետոյ դտնուեցաւ միոյն իւր ձեռապրին մաս մը, այն որ մինչեւ ցարդ յոյն լեզուով ալ կայ. — Բ. Թէ՛ յոյն բնագրին կրսուելէն առաջ, բովանդակ այս մոտենացրութիւնն թարգմանեալ է հայերէն Եգաուուն մէջ, Սրբոյն միւս զործոց հետ. և այս հետևութիւնն կը զօրանայ՝ մեխնութեան հայերէն լեզուին վայելազարդ ոճէն, յար և նման Սրբոյն ուրիշ մատենագրութեանց թարգմանութեան: Գ. Կարելի է համարել թէ Ս. Ոսկերեան չուզելով ժողովրդեան հատարակել կենցանութեան ատեն այս զործու, իւր կիրառութեան համուր և ՚ի վարժութիւն քարտութեանց յօրինած լինելով, աքսորանաց ժամանակն ալ իւր քովը պահած է. և յետ իւր վասաւոր մահուան. մեր թարգմանից նորա միւս մատենագրութեանց հետ այս մեխնութիւնն ալ թարգմաներ են: Բայց քիչ ատենէն Հայոց բազմազդի թշուառութեանց, տառապանաց և հալածանաց միջոց, Հայաստանի քաղաքական և կրօնական մեծամեծ յեղափոխութեանց

պատճառաւ, որ է գարուն վերջն կիսուն հանգիպեցան՝ Պարսից և ուրիշ բարբարոս աղքաց ձեռքք, կորսուած լինին յունարէն սակաւաթիւ օրինակներն՝ Սրբոյն իսկապիր օրինակին հետ ՚ի միասին. և գուցէ յետ երկար ժամանակաց, (թերես այս ծանօթութիւնն զրողին կենաց միջոց, որ է մի գարուն կամ աւելի ևս տապաջ), գտնուելով յոյն բնազրին առաջին մասն միայն, որ ըստբացատրութեան ծանօթութեանն թուի լինել Սրբոյն ձեռքով զրսած օրինակն՝ զոր հիմա ձեռքերնիս ունինք, թէ Հայր և թէ Յայնք բազմաթիւ օրինակութիւններ ըրին. և այս բարեբախտ գէպս է թերես որ կը նշանէ գործոյս ժամանակակից օրինակովն՝ եսայեայ Մեկնութեանս հայերէն թարգմանութեան մէջ:

Այս մեկնութիւնս ուրեմն, զոր մենք առաջին անգամ կը հրատարակեմք յանուն Ս. Յովհաննու Ասկերեանի, սուուզի իրեն կը վերաբերի, որավիշեան զայս կը հաւասարն մեզ թէ նախնի ժամանակաց միաբերան վկայութիւնք, թէ ներըին և պատմական բագմաթիւ ընծացութիւնք, թէ Ասկերեանի և թարգմանչին ոճն, թէ հուսկ ուրեմն մատենիութիւնն, որ արևելիան եկեղեցւոյ Ս. Հայրապետին խորին հըմատութեան և մեծափառ համբաւոյն անարժան չէ ամենիկն:

Ուստի մենք հայերէն ձեռապրին ներկայ հրատարակութիւնս կը նուիրենք մեր ազգին՝ յօգուտ հոգեսր և ուսումնական, և ՚ի փառս հրաշոլի հանճարոյ Սրբոյն, թէպէտ մեր ընծացած փառաց անկարօտ է, և ՚ի պարժանա մեր Սուրբ թարգմանչաց, որք այսպիսի սրբանուէր հանճար մը յարգեցին և սիրեցին, որք և յետ բազմաթիւ գարաց՝ գեռ ևս կը նշանացն մեր ականջաց մէջ եկեղեցւոյ սրբազն Դեմոսթենի՝ Ս. Ասկերեանի հրաշոլի խօսից արձագանզը՝ մեր հինգերորդ գարուն սակերարասու հայկական լեզուաւու:

Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՄՆ